ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «22» 04 2026թ. № 1164-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՓՈԽՀԱՏՈՒՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՃԱՌՎԱԾ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի N 514-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ և 23-րդ կետի 2-րդ ենթակետերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել՝ «Հայաստանի Հանրապետությունում պարարտանյութերի ձեռքբերման աջակցության» ծրագրի շրջանակում սուբսիդավորման կամ փոխհատուցման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել՝ «Հայաստանի Հանրապետությունում պարարտանյութերի ձեռքբերման աջակցության» ծրագրի շրջանակում վաճառված պարարտանյութերի վերաբերյալ

տեղեկությունը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացնելու ձևաչափը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ հրամանը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի հրապարակումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «___» _____ թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյանի (այսուհետ՝ Նախարարություն), ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, **մի կողմից, «——»**, մյուս կողմից (այսուհետ՝ **Մատակարար**), (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 18-ի 514-Լ որոշմամբ հաստատված «**Հայաստանի Հանրապետությունում պարարտանյութերի ձեռքբերման աջակցության**» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) և Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» _____ որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Մատակարարը պարտավորվում է Ծրագրի շրջանակում շահառուներին վաճառել համապատասխան պարարտանյութը (կամ պարարտանյութերը) (այսուհետ՝ Ապրանք), որոնք պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետությունում և ներառված լինեն Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում և համապատասխանեն դրանց գրանցման տվյալներին, իսկ Նախարարությունը պարտավորվում է Ծրագրով սահմանված կարգով, շահառուներին վաճառված Ապրանքի համար հաշվարկված սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարը, Ծրագրի 23-րդ կետով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված և 24-րդ

կետի համաձայն ուսումնասիրված փաստաթղթերի հիման վրա, փոխանցել Մատակարարի համապատասխան հաշվեհամարին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Նախարարությունն** իրավունք ունի՝

2.1.1. Ծրագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ միակողմանի լուծել սույն Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները,

2.1.2. Պայմանագրի դրույթները խախտելու դեպքում՝ Մատակարարից պահանջել Ծրագրի շրջանակում տրամադրված սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարները 15 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

2.2. **Նախարարությունը** պարտավոր է՝

2.2.1. Ծրագրով սահմանված կարգով և ժամկետներում Մատակարարի հաշվեհամարին փոխանցել սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարը:

2.2. **Մատակարարը** իրավունք ունի՝

2.2.1. Նախարարությունից պահանջել Ծրագրի չափորոշիչներին համապատասխան Ապրանքի վաճառքի սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարը՝ Ծրագրով նախատեսված ժամկետներում:

2.3. **Մատակարարը** պարտավոր է՝

2.3.1. Ապրանքի վաճառքը իրականացնել Ծրագրի սահմանված ժամկետներում,

2.3.2. Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար ապահովել Ծրագրի 20-րդ կետով պահանջվող փաստաթղթերը,

2.3.3. մատակարարել միայն Ծրագրի 6-րդ կետի դրույթներին համապատասխան Ապրանք,

2.3.4. խստորեն պահպանել Ծրագրի դրույթները,

2.3.5. Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված խախտման դեպքում՝ Նախարարության կողմից ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջե վերադարձնել Ծրագրի շրջանակում տրամադրված սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարները և վճարումը հավաստող փաստաթղթերը 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Նախարարություն:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով Պայմանագրի գինը հանդիսանում է Ծրագրի շրջանակում Մատակարարի կողմից շահառուներին փաստացի վաճառված պարարտանյութի համար հաշվարկված սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարը, որը որոշվում է յուրաքանչյուր 50 կգ քաշով մեկ պարկի հաշվով՝ վաճառքի գնի և Ծրագրի 5-րդ կետով սահմանված տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան Ծրագրով սահմանված առավելագույն սուբսիդիայի կամ փոխհատուցման չափը յուրաքանչյուր 50 կգ քաշով մեկ պարկի համար:

3.2 Նախարարությունը սուբսիդավորման կամ փոխհատուցման ենթակա գումարը Մատակարարին փոխանցում է անկանխիկ եղանակով՝ վերջինիս հաշվեհամարին, հիմք ընդունելով Ծրագրով սահմանված կարգով ներկայացված և ուսումնասիրված փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան բյուջետային հատկացումների առկայության պայմաններում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրի հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Մատակարարը պարտավորվում է Ծրագրի շրջանակում շահառուներին վաճառել Ծրագրի պահանջներին համապատասխան Ապրանքը, իսկ Նախարարությունը պարտավորվում է Ծրագրով սահմանված կարգով ներկայացված և ուսումնասիրված փաստաթղթերի հիման վրա իրականացնել համապատասխան սուբսիդավորման կամ փոխհատուցման վճարումները:

4.2. Ծրագրի իրականացման ընթացքում անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարները ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ Ծրագրով սահմանված կարգով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

6.2. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

6.3. Պայմանագիրը կարող է լուծվել միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առնվազն 10 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 5 էջից, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2. Սույն Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Ծրագրով սահմանված պահանջների համաձայն:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	_____
Հասցե՝	Հասցե՝ ՀՀ _____ մարզ,
0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5	_____ համայնք,
ՀՀ ֆինանսների նախարարության	___ փողոց, տուն ____
գործառնական վարչություն	անձնագիր AA 0000000,
Հ/Հ----------	տրվ. _____թ., -ի կողմից
ՀՎՀՀ 02698604	Հեռ.+374 _____
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության	«_____ԲԱՆԿ» ԲԲԸ
գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ _____
	Հ/Հ _____
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ	
_____	_____
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ.Տ

«Հայաստանի

Հանրապետությունում պարարտանյութերի ձեռքբերման աջակցության» ծրագրի շրջանակում
Տեղեկություն վաճառված պարարտանյութերի վերաբերյալ

Ֆ/ Հ	Մատակարարի անվանում	Մարզ	Համայնք	Բնակավայր	Շահառուի անուն ազգանուն	Պետական համար	Հողամասի մակերես (հա)	Մնացած զրաքի վաղամանի կամ համաձայի/ վաղամանի ղեկավարի տեղեկանքի համարը	Մնացած զրաքի կարգաստրային ծածկագիր	Վաճառված պարարտանյութի քանակ (կգ)						Շահառուի կողմից վճարված պարարտանյութի միավորի (50կգ/1 պարկ) արժեք (ՀՀ դրամ)						Շահառուի կողմից վճարված պարարտանյութի արժեք (ՀՀ դրամ), ընդամենը						Սուբսիդավորման չափը ՀՀ դրամ
										ազոտական		ֆոսֆորական	կալիումական	հումկցված		ազոտական		ֆոսֆորական	կալիումական	հումկցված		ազոտական		ֆոսֆորական	կալիումական	հումկցված		
										Լմնիհակցիլ	Կարբամիդ			Լմնֆոս	Նիտրոամոֆոսկա	Լմնիհակցիլ	Կարբամիդ			Լմնֆոս	Նիտրոամոֆոսկա	Լմնիհակցիլ	Կարբամիդ			Լմնֆոս	Նիտրոամոֆոսկա	
1																												
2																												
3																												
4																												
5																												
6																												
7																												
8																												
9																												
10																												
11																												
12																												
13																												
14																												
15																												
16																												
17																												
18																												
19																												
20																												
21																												
22																												
23																												
24																												
25																												
26																												
27																												
28																												
29																												
30																												
31																												
32																												
33																												
34																												
35																												
36																												
37																												
38																												
39																												
40																												
41																												
42																												
43																												
44																												
45																												

Համայնքի ղեկավարի Անուն Ազգանուն _____ստորագրություն

Կ.Տ.